ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

09.01.2020թ. *Քաղաքացիական գործ*
ք. Երևան *թիվ ԵԴ/35875/02/19*

ՈՐՈՇՈՒՄ
Թիվ ԵԴ/35875/02/19 քաղաքացիական գործի
ենթակայությունը որոշելու մասին

1. Գործի դատավարական նախապատմությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

Գրիգոր Հովսեփի Նասոյանի ներկայացուցիչ Տիգրան Գալստյանը 24.10.2019թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ պատասխանող Հովսեփ Նասոյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին:

Հայցվորի ներկայացուցիչը Դատարանից խնդրել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել Գրիգոր Նասոյանի սեփականության իրավունքը՝ ք. Երևան, Սարի Թաղ 9-րդ փողոց, 24 տուն հասցեի անշարժ գույքի նկատմամբ: Միաժամանակ ներկայացնելով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն՝ խնդրել է արգելել պատասխանողին օտարել, գրավ դնել կամ այլ իրավունքով ծանրաբեռնել վիճելի հասցեի անշարժ գույքը:

Դատարանի **(դատավոր՝ Լ. Գրիգորյան)** 06.11.2019թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, իսկ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժվել է:

27.11.2019թ. Դատարանում ստացվել է հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը, որով ներկայացուցիչը Դատարանից խնդրել է արգելել պատասխանողին կամ այլ անձանց, այդ թվում՝ «Հովսեփ Նասոյան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարչին օտարել, գրավ դնել կամ այլ իրավունքով ծանրաբեռնել վիճելի հասցեի անշարժ գույքը:

Գործի նյութերում առկա չէ վերը նշված միջնորդության կապակցությամբ Դատարանի դիրքորոշումն արտահայտող դատական ակտ:

Այնուհետև, 02.12.2019թ. Դատարանը որոշում է կայացրել գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Ըստ «Դատալեքս տեղեկատվական համակարգ» ծրագրից արտատպված հա. ԵԷԴ/0160/04/16 սնանկության գործի քարտի՝ սույն քաղաքացիական գործով պատասխանող «Հովսեփ Նասոյան» ՍՊ ընկերությունը ՀՀ սնանկության դատարանի դեռևս 2017 թվականի հունվարի 16-ի վճռով ճանաչվել է սնանկ:

Ուսումնասիրելով սույն քաղաքացիական գործի նյութերը, առկա ապացույցները, գնահատելով և համադրելով թիվ ԵԷԴ/0160/04/16 սնանկության գործով առկա՝ սույն քաղաքացիական գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, դատարանը հանգեց այն եզրակացության, որ թիվ ԵԴ/35875/02/19 քաղաքացիական գործը պետք է հանձնել ՀՀ սնանկության դատարանի քննության, հետևյալ պատճառաբանությամբ.

Այն գույքը, որի վերաբերյալ պահանջ է ներկայացրել հայցվորը, ներառված է սնանկության վարույթում և այդ գույքն աճուրդով վաճառելու գործընթաց է տեղի ունենում: Նման պայմաններում, թեև սույն գործով պատասխանողը ֆիզիկական անձ է, իսկ սնանկության գործով նույն ֆիզիկական անձի մասնացությամբ իրավաբանական անձն է սնանկ ճանաչված, դատարանը գտնում է, որ սույն վեճը պատկանում է սնանկության դատարանի իրավասությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակներում:

«Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածով սահմանված եզրափակիչ և անցումային դրույթների 23-րդ մասի համաձայն՝ 2019 թվականի հունվարի

1-ից Հայաստանի Հանրապետության վարվող բոլոր սնանկության գործերը մեկ ամսվա ընթացում փոխանցվում են սնանկության դատարան (...):

Տվյալ դեպքում ուսումնասիրելով քաղաքացիական գործի նյութերը, գտնում եմ, որ հա. ԵԴ/35875/02/19 քաղաքացիական գործով ներկայացված պահանջը անմիջականորեն առնչվում է պատասխանող Հովսեփ Նասոյանի վերաբերյալ սնանկության գործով (գործ. հա. ԵԷԴ/0160/04/16) վարույթին, և հիմք ընդունելով «Սնակության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը և «Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածով սահմանված եզրափակիչ և անցումային դրույթների 23-րդ մասը, գտնում եմ, որ սույն քաղաքացիական գործը պետք է փոխանցել սնանկության դատարանի քննությանը և այն քննել Հովսեփ Նասոյանի վերաբերյալ սնանկության (գործ. հա. ԵԷԴ/0160/04/19) վարույթի շրջանակներում»:

2019թ. դեկտեմբերի 16-ին թիվ ԵԴ/35875/02/19 քաղաքացիական գործը մակագրվել է Սնանկության դատարանի դատավոր Բ.Մկրտչյանին և 2019թ. դեկտեմբերի 17-ին հանձնվել է դատավորին:

Սնանկության դատարանը 19.12.2019թ. կայացրած որոշմամբ, վկայակոչելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածը, 24-րդ հոդվածի 2-րդ մասը, «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածը, 47-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասը, 26-րդ հոդվածը և նշելով իր պատճառաբանությունները, գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին: Որոշմամբ մասնավորապես նշվել է հետևյալը.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի նոր խմբագրության համաձայն (հոդվածը լրացվել է 13.11.2019թ. թիվ ՀՕ-189-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 21.11.2019թ.)՝

1. Գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ

գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

2. Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

3. Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

4. Սույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական կամ սննդկության դատարանի կողմից համապատասխանաբար վերահասցեագրված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ:

Տվյալ դեպքում, դատարանը նկատի ունենալով թիվ ԵԴ/35875/02/19 քաղաքացիական գործը ՀՀ սննդկության դատարանի քննությանը ենթակա լինելու վերաբերյալ անհամաձայնության հանգամանքը, գտնում է, որ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն պետք է ուղարկել ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին»:

Թիվ ԵԴ/35875/02/19 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 25.12.2019թ.:

2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և Սննդկության դատարանի միջև գործի քննության ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու և առկա իրավակարգավորումների հիման վրա գործի ենթակայությունը հստակ որոշելու կապակցությամբ հարկ է վերլուծել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններից քաղաքացիական գործերը Սննդկության դատարանի քննությանը հանձնելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Սննդկության մասին» օրենքի ստորև ներկայացվող իրավակարգավորումները, ինչպես նաև այդ իրավակարգավորումների հարաբերակցության վերաբերյալ հարցերը:

Մինչև բարձրացված հարցի բովանդակային քննարկմանը անցնելը՝ հարկ է նշել, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 23.10.2019թ. ընդունված թիվ ՀՕ-189-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 21.11.2019թ.) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածում կատարվել են լրացումներ և փոփոխություններ, որոնցով Վճռաբեկ դատարանի նախագահին այլևս իրավական հնարավորություն է ընձեռնվել՝ որոշման

կայացմամբ լուծել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների և Սնանկության դատարանի միջև գործերի ենթակայության կապակցությամբ հնարավոր ծագող վեճերը:

Այսպես՝

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 18-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական գործերի ենթակայությունը, որի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության դատարանին են ենթակա սնանկության հարաբերությունները կարգավորող օրենքով նախատեսված բոլոր գործերը:

«Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:

«Սնանկության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ: Ի ապահովումն պարտապանի՝ սույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած ապահովված իրավունքով պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության համար ապահովված իրավունքի առարկան (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող) չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի

գույքի կազմում են ընդգրկվում սույն օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում:

«Սնանկության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապահովված իրավունքի առարկան իրացնելու մասին դիմումը բավարարելու վերաբերյալ դատարանի որոշմամբ ապահովված պարտատերը չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում, և նրա ապահովված պահանջները բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար ապահովված իրավունքի առարկայի իրացման հաշվին: Այդ դեպքում ապահովված պարտատերը, անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ:

«Սնանկության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ եթե ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցները գերազանցում են համապատասխան ապահովված պահանջի գումարը, ապա գերազանցող գումարի մասով այդ միջոցների նկատմամբ տարածվում է մորատորիում, և այդ միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված հերթականությամբ, իսկ եթե ապահովված իրավունքի առարկան այլ անձի սեփականություն է՝ փոխանցվում են այդ անձին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավի իրավունքը (այսուհետ՝ գրավը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավը լրացուցիչ (ակցեսոր) պարտավորություն է գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորության կատարման ապահովման համար:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

Օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն.

1. Գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

2. Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

3. Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

4. Սույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական կամ սնանկության դատարանի կողմից համապատասխանաբար վերահասցեագրված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ:

Վերը նշված իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից քաղաքացիական գործերը Սնանկության դատարանի քննությանը կարող են հանձնվել միայն համապատասխան դատավարական գործողությունների կատարման միջոցով հետևյալ փաստական հանգամանքների առկայության պարզման արդյունքներով.

Այսպես՝ քաղաքացիական գործը Սնանկության դատարանում քննության ենթակա լինելու վերաբերյալ իրավակարգավորումները սահմանված են «Սնանկության մասին» օրենքով, մասնավորապես՝ 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:

Նշված իրավակարգավորման բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ մեկնաբանումից հետևում է, որ քաղաքացիաիրավական վեճ քննող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իր վարույթում քննվող գործը Սնանկության դատարանի քննությանը ենթակա լինելու վերաբերյալ եզրահանգում կատարելու համար պետք է գործով պարզի հետևյալը.

Ա) արդյոք քաղաքացիական գործով վեճը ծագել է սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ,

Բ) արդյոք սնանկության գործով պարտապանն է հանդիսանում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղաքացիաիրավական վեճով պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորումների լույսի ներքո մեկնաբանելով «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը՝ պետք է փաստել, որ միայն վերը նշված երկու պայմանների միաժամանակյա առկայությամբ գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր արձանագրել, որ գործն ըստ ենթակայության ուղարկած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի հետագա քննություն[1]:

Վերոգրյալ իրավակարգավորումները, դրանց վերաբերյալ կատարված վերլուծությունները համադրելով սույն քաղաքացիական գործի նյութերում առկա փաստական տվյալների հետ՝ կարելի է արձանագրել հետևյալը.

1. թիվ ԵԴ/35875/02/19 քաղաքացիական գործով Գրիգոր Հովսեփի Նասոյանի ներկայացուցիչ Տիգրան Քաջիկի Գալստյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ պատասխանող ***Հովսեփ Նասոյանի***՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին:

2. 27.11.2019թ. Դատարանում ստացվել է հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը, որով ներկայացուցիչը Դատարանից խնդրել է արգելել պատասխանողին կամ այլ անձանց, այդ թվում՝ ***«Հովսեփ Նասոյան» ՍՊԸ-ի*** սնանկության գործով կառավարչին օտարել, գրավ դնել կամ այլ իրավունքով ծանրաբեռնել վիճելի հասցեի անշարժ գույքը:

---

[1] «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ օրենսդրական նոր փոփոխությունների բովանդակությունն արտացոլող վերլուծությունները կներկայացվեն ստորև:

3. Սնանկության դատարանում քննվում է թիվ ԵԷԴ/0160/04/16 սնանկության գործն ըստ «Էյչ-Էս-ԲԻ-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի դիմումի՝ ***«Հովսեփ Նասոյան» ՍՊԸ-ին*** սնանկ ճանաչելու պահանջի մասին:

4. Գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ թիվ ԵԷԴ/0160/04/16 սնանկության գործով «Էյչ-Էս-ԲԻ-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի հանդեպ ***«Հովսեփ Նասոյան» ՍՊԸ-ի*** պարտավորությունն ապահովված է նաև ***քաղաքացի Հովսեփ Նասոյանին*** սեփականության իրավունքով պատկանող՝ ք. Երևան, Էրեբունի համայնք, Սարի Թաղ 9-րդ փողոց, թիվ 24 տուն հասցեի անշարժ գույքի գրավով (հիմք՝ Սնանկության դատարանի 19.12.2019թ. թիվ ԵԴ/35875/02/19 որոշում):

5. Գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ թիվ ԵԴ/35875/02/19 քաղաքացիական գործով վեճի առարկա հանդիսացող վերը նշված հասցեի անշարժ գույքը ներառված է թիվ ԵԷԴ/0160/04/16 սնանկության գործով պարտապան ***«Հովսեփ Նասոյան» ՍՊԸ-ի*** գույքի կազմում (հիմք՝ Սնանկության դատարանի 19.12.2019թ. թիվ ԵԴ/35875/02/19 որոշում):

Վերը նշվածը թույլ է տալիս արձանագրելու, որ քաղաքացիական գործում առկա չեն եղել անհրաժեշտ և բավարար փաստական տվյալներ՝ Դատարանի կողմից քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու համար, մասնավորապես՝ գործով չի հիմնավորվում վերը նշված երկու նախապայմանների միաժամանակյա առկայությունը:

Այսպես. գործով վերը նշված հանգամանքները թույլ են տալիս հստակորեն արձանագրել, որ Դատարանի կողմից պատշաճ գնահատականի չի արժանացել այն հանգամանքը, որ թիվ ԵԴ/35875/02/19 քաղաքացիական գործով պատասխանող է հանդիսանում ***ֆիզիկական անձ Հովսեփ Նասոյանը,*** իսկ թիվ ԵԷԴ/0160/04/16 սնանկության գործով պարտապան է հանդիսանում իրավաբանական անձ ***«Հովսեփ Նասոյան» ՍՊԸ-ն***: Մինչդեռ, վերը նշված իրավական վերլուծություններից հետևում է, որ քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու համար պարտադիր նախապայմաններից է հանդիսանում այն հանգամանքը, որ սնանկության գործով հենց պարտապանը պետք է հանդիսանա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղաքացիաիրավական վեճով պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ:

Այսինքն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղաքացիաիրավական վեճի առարկան սնանկության գործով պարտապանի գույքի

կամ իրավունքների կազմում գտնվելն ինքնին բավարար չէ քաղաքացիական գործն ըստ ենթակայության Սնանկության դատարանի քննությանը հանձնելու վերաբերյալ եզրահանգում կատարելու համար:

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ թիվ ԵԴ/35875/02/19 քաղաքացիական գործը Սնանկության դատարանին ըստ ենթկայության հանձնելու համար անհրաժեշտ փաստական և իրավական հիմքերը բացակայում են, ուստի, թիվ ԵԴ/35875/02/19 քաղաքացիական գործը պետք է հանձնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Միաժամանակ, «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումն անհրաժեշտ է վերլուծել Օրենսդրի կամքի՝ ժամանակագրական իմաստով զարգացման և դրա հիման վրա տեղի ունեցած օրենսդրական նոր փոփոխությունների բովանդակության բացահայտման տեսանկյունից:

Այսպես՝ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն (ներկայումս գործող խմբագրությամբ)՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:

Նման իրավակարգավորում սահմանելիս Օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովել սնանկության գործընթացի արդյունավետությունը, այդ թվում՝ ապահովել սնանկության գործի վարման ամբողջականությունը, գործով բացահայտել հնարավոր բոլոր պարտատերերին և նրանց պահանջները, սնանկության վարույթով անցնող ցանկացած գույքի վերաբերյալ հարցի քննարկում կազմակերպել միայն սնանկության վարույթում, ինչը կապահովի սնանկության վարույթի արդյունավետությունը և սնանկության վարույթի մասնակիցների իրավունքների ամբողջական իրացումը, քաղաքացիական և սնանկության գործերի ողջամիտ ժամկետում քննությունը, բացառելով հանդերձ նույն գույքի կամ իրավունքի վերաբերյալ տարբեր դատարաններում քննվող գործերի, ինչպես նաև դատական ակտերի առկայությունը և այլն:

Օրենսդրի այս կամքն իր ցայտուն արտահայտումն է ստացել տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններում, որպիսի իրավիճակում ուշադրության է արժանի

«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից ընդունված 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքը (ուժի մեջ է մտնելու 15.04.2020թ.):

Այսպես. «Սնանկության մասին» օրենքի նոր խմբագրությամբ 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր):

Նշված նոր իրավակարգավորման բովանդակության բացահայտման արդյունքում կարելի է արձանագրել, որ Օրենսդրի սահմանած նոր իրավակարգավորումն ենթադրում է քաղաքացիական գործերի առավել լայն շրջանակի քննություն սնանկության վարույթի շրջանակում, մասնավորապես՝ քաղաքացիական գործեր, որոնք կապված են սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերի հետ (բացառությամբ սնանկության գործերով կառավարչների կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի): Ընդ որում հարկ է նկատել, որ նոր իրավակարգավորումն այլևս պարտադիր պահանջ չի նախատեսում սնանկության վարույթում պարտապան հանդիսացող անձի՝ քաղաքացիական գործում ունեցած դատավարական կարգավիճակի մասին:

Այս առումով ուշադրության է արժանի նաև վերը նշված օրենքի անցումային դրույթներով սահմանված իրավակարգավորումների բովանդակությունը, մասնավորապես՝ Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ից և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված սնանկության գործերի վրա: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը

հարուցված սնանկության գործերը վարվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նորմերով:

Հետևաբար, պետք է փաստել, որ 2020 թվականի ապրիլի 15-ից հետո (ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները և Սնանկության դատարանը վերոգրյալ օրենսդրական փոփոխությունների բովանդակությանը համահունչ պետք է գնահատականի արժանացնեն քաղաքացիական գործերի ենթակայության հարցերի հետ կապված հնարավոր վեճերի առկայության կամ բացակայության հարցերը:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԵԴ/35875/02/19 քաղաքացիական գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:
2. Սույն որոշումը և թիվ ԵԴ/35875/02/19 քաղաքացիական գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:
3. Որոշման մեկ օրինակն ուղարկել Սնանկության դատարան:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ